բանէ անտի անցուցարձի իրաւունս ունին, այսուհետեւ եւս ըստ առաջնոյն պարտ է գործադրիլ։ Յեկեղեցին Բեթ-ղեհէմի 'ի մէջ Այրին 1847 յամին կորուսեալ ասպին յար և նմանն 'ի Կայսերական մեծութենէս իբրև հրապարակական յիշատակ Քրիստոնէից, և իսպառ բառնալոյ զխռովութիւնն, նոր 'ի նորոյ բեւեռեալ ասպին։ Ի Քրիստոնեայ ազգաց և ոչ միոյն յատուկ և նոր իրաւունք ոչ է տուեալ, և ոչ 'ի միում ժամանակի չունի կրել փոփոխութիւն։ Քրիստոնեայ ազգք, որք արժանացեալ են կատարել զօրէնս եւ զուխտս իւրեանց 'ի վերայ Գերեզմանի Ս. Աստուածածնի, յամենայն աւուր պարտին կատարել զօրէնս եւ զուխտս իւրեանց, պայմանաւ չչինել արգել օրինաց և ուխտին այլոց ազգաց։ Յամենայն առաւօտու սկսեալ 'ի ծագմանէ արեգական, Յոյնք, ապա Հայք, և յետ այնոցիկ Լատինք, իւրաքանչիւր ազգք 1½ ժամ պարտին կատարել զօրէնս, և այս բարեկարգութեան յօրինումն հրամանաւ եւ թոյլտուութեամբ Տէրութեանս գործադրեալ է։

Ի գիւղն Բեթղեհէմի կից Լատին վանաց երկու հատոր պարտիզաց տեսչութիւնն Յոյնք և Լատինք պարտին վարել, և ոչ ումեք աւանդական իրաւունք լինելու պայմանաւ, մինչեւ ցայսօր ո՛րպէս գործադրեալ է, նոյն եղանակաւ պարտ է գործածել։ Բաց յայսցանէ եւ ոչ միոյ ազգի պաշտօնական գրովք նորոգ գործադրելի թոյլտուութիւն չլինելոյ սակս, ամենեքեան պարտին մնալ 'ի վերայ ներկայ վիճակին։ Մինչեւ ցայսօր յԵրուսաղէմ Յոյն, Լատին եւ Հայ ազգք զՍ. Տեղիս, թէ ընկերովի եւ թէ անկախ, զորս ունին 'ի ձեռս իւրեանց պարտին հաստատուն մնալ 'ի ձեռս նոցա, որպէս և էին։ Այսոքիկ ամենեքեան գոլով գրեալ և կարգաւորեալ, զբովանդակութիւնս նորին յայտ արարեալ ծանուցին Կայսերական մեծութեանս։ Համաձայն գրելոց 'ի վեր անդր, և 'ի մասին՝ գործադրութեան 'ի հաճութենէ Բարձր կամաց Տէրութեան կախեալ գոլով՝ թագաւորական հրամանաւս և Բարձր կարողութեանս համեմատ Արքայական դիւանէս Կայսերական ձեռագրով վաւերեալ տուաւ բարձրագոյն հրովարտակս, զուք՝ որ Բեղեհէմ, Դատաւոր և այլն էք, իմացեալ զորպիսութիւն հանդամանացն, սոյն հրովարտակս արձանագրեսջիք 'ի Դատա-